ՀՀ Քաղաքաշինության նախարար
պարոն Վ.Վարդանյանին
Գյումրի քաղաքի բնակիչ Լուսիկ Մալոյանից
ք.Գյումրի Շիրակացի փող. 3-րդ թաղամաս
14 շենք բն. 10 տնակ 120 / 142

Դիմում

1988թ. երկրաշարժի ժամանակ կորցրել եմ 3 / երեք / սենյականոց բնակարան, որտեղ բնակվել ենք 5/ հինգ / անձով: Ավագ որդիս ամուսնացել է, հետո ամուսնալուծվել, որի պատճառով հարսս և 2 թոռներս դուրս են գրվել մեր հաշվառման վայրից: Որդիս ամուսնացել երկրորդ անգամ և ունի մեկ աղջիկ /կից ներկայացվում է ամուսնության վկայականի և ծննդյան վկայականի պատճենները /:
Պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերից բնակարան ստացող ընտանիքների ցուցակում ընդգրկվելու նպատակով Շիրակի մարզպետարան ներկայացրել եմ մեր ընտանիքի անդամների փաստաթղթերը:
Շիրակի մարզպետարանում հրաժարվում են հաշվառման վերցնել ավագ որդուս ընտանիքի անդամներին, ինչպես նաև կրտսեր որդուս:
Ավագ որդուս ընտանիքի անդամներին / հարսիս և թոռանս / հրաժարվում են հաշվառման վերցնել պատճառաբանելով որ հարսս Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է: Մեզ համար անհասկանալի է նման պատճառաբանությունը, քանի որ հարսս և թոռս որդուս ընտանիքի օրինական անդամներն են: Ելնելով տնակային պայմաններից նրանք ստիպված են ժամանակավորապես բնակվել արտերկրում և ապահովածության համար պահպանել ՌԴ քաղաքացու կարգավիճակը:
Կրտսեր որդուս մերժման պատճառը այն է,որ նա երկրաշարժից հետո հաշվառվել է այլ հասցեում: Իրականում նա ստիպված էր հաշվառվել մեր ազգականի տանը, քանի որ երկրաշարժից հետո կորցրել էր անձնագիրը, իսկ ոստիկանությունում հրաժարվում էին նրան հաշվառել նախկին հաշվառման վայրում քանի որ այն ուներ փլված շենքի կարգավիճակ, իսկ տնակի հասցեում / որտեղ մենք բնակվում ենք / արգելվում էր հաշվառման վերցնել:

Պարոն նախարար

Խնդրում ենք Ձեր հանձնարարականը մեր ընտանիքի իրական անդամներին /կրտսեր որդուս, հարսիս և թոռանս / հաշվառել մեր ընտանիքի ցուցակում, որը մեզ հնարավորություն կտա ստանալ երկրաշարժի ժամանակ կորցրած 3 սենյականոց բնակարանը:

Հարգանքներով Լուսիկ Մալոյան

06.04.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван,пл.Республики,
Дом Правительства 3
Gavernment House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200
www.mud.am
E-mail: info@mud.am

28.04.11թ. N 03/13.1/1761-1

Ձեր N ---------- աո ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի
տնակ N120/142
Լուսիկ Մալոյանին

Հարգելի տիկին Մալոյան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին ուղղված Ձեր՝ 2011 թվականի ապրիլի 6-ի դիմումի կապակցությամբ հայտնում եմ.

դիմումում բարձրացված՝ Գյումրի քաղաքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում Ձեր ընտանիքի կազմում Ձեր կրտսեր տղային՝ Գագիկ Մալոյանին, ինչպես նաև ավագ տղայի՝ Արտավազդ Մալոյանի ՌԴ քաղաքացի հանդիսացող կնոջ ու երեխային դիտարկելու հարցի քննարկմանը հնարավոր է անդրադառնալ Գագիկ Մալոյանի անձնագրի, նրա անձնագրային հաշվառման հասցեի՝ Լ.Մադոյան փողոցի N231 տան սեփականության վկայականի, Արտավազդ Մալոյանի նոր լիազորագրի (ներկայացված լիազորագիրը տրված է 2008 թվականի ապրիլի 14-ին՝ 3 տարի ժամկետով), ինչպես նաև վերջինիս և Մարինա Խանագյանի ամուսնալուծության վկայականի պատճենները ներկայացնելու դեպքում:

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80